ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի թվականի դեկտեմբերի 10-ից 16-ը
Ռուսաստանի Դաշնության ք. Վլադիկավկազ
Հյուսիսային Օսիայի մաքսատան՝ Վերին Լարս անցման կետ
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Կարեն Բալայան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ /Ժ"Թ/,

Սարգիս Մարապանյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի ավագ մաքսային տեսուչ,

Գրիշա Միքայելյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ,

Արտյոմ Գիշյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ /Ժ.Թ/,

Խորեն Գրիգորյան- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնության ք. Վլադիկավկազ, Հյուսիսային Օսիայի մաքսատան՝ Վերին Լարս անցման կետ, 2023թ.-ի թվականի դեկտեմբերի 10-ից 16-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Հրավերը ստացվել է 20.11.2023թ.-ի թիվ 07-249/6229 գրությամբ՝ Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության մաքսանենգության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ պարոն Ա.Վ. Լյաշկևիչի կողմից:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղումը նախատեսված էր ՌԴ, ք. Վլադիկավկազ, Հյուսիսային Օսիայի մաքսատանը կայանալիք մաքսային ծառայության առաջնորդների հանդիպմանը և շնավարժ-մասնագետների վերապատրաստման ծրագրին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները

- մաքսային մարմինների իրավապահ գործունեության շրջանակներում կինոլոգիական աջակցության վերաբերյալ ուսումնական նյութերի նախագծի նախապատրաստման վերաբերյալ թեմաները,
- մաքսային մարմինների կինոլոգիական գործունեության զարգացման հետ կապված ուսումնամեթոդական նյութերի հարցերը,
- Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները,
- Շների վարքի և վարժեցման ֆիզոլոգիայի հիմունքները,
- Շների վարժեցման ընթացքում կիրառվող խթանիչները (գրգռիչները),

- Շների աշխատանքը հեշտացնող և բարդացնող պայմանները,
- Տարբեր տեսակի ծառայությունների համար կիրառվող վարժեցման պիտանի շների ընտրությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ՌԴ կինոլոգիական ծառայության ղեկավար Ա"Վ"Չերկավսկու, կինոլոգիական ստորաբաժանման օպերատիվ բաժնի ղեկավար պարոն Վ"Գորբաչովի, Հյուսիս-Կովկասյան մաքսատան օպերատիվ ստորաբաժանման ղեկավար Վ"Ա"Սերեդինի, ինչպես նաև՝ ՀՀ մաքսային կցորդ Վ"Հակոբյանի հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ՀՀ-ում թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թութունի և թղթադրամների հայտնաբերման ոլորտում զարգացումները, նախատեսվող բարեփոխումները, ինչպես նաև՝ քննարկվել են շնավարժների՝ սահմանակետերում աշխատանքի կազմակերպման հարցերը օպերատիվ համագործակցության խնդիրների և ՌԴ ք"Ստավրոպոլի ոստիկանության բազայի հիման վրա կազմակերպվող պրակտիկ դասընթացների վերաբերյալ հարցերը :

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Քանի որ գործուղումը նախատեսված էր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով, հետևաբար որևէ նոր որոշում չի ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Գործուղման ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ ՌԴ շնագիտական կենտրոնում անցկացնել անվճար մեթոդոլոգների ուսուցում, ինչպես նաև ՌԴ ք" Մայկոպի շնագիտական կենտրոնի բազայի հիման վրա անցկացնել շնավարժների վերապատրաստում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Կարեն Բալայան

Սարգիս Մարապանյան

Գրիշա Միքայելյան

Արտյոմ Գիշյան

Խորեն Գրիգորյան

«18» Դեկտեմբերի 2023թ.